

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԲԱՐԿԵՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ. Բ. ՇԵԼԼԻԻ
«ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՊՐՈՄԵԹԵՈՍ» ԴՐԱՄԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

Ժ. 02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.թ., դոցենտ Բ. Հ. Սողկյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բ.գ.դ., պրոֆեսոր Ն. Լ. Հարությունյան
բ.գ.թ., դոցենտ Կ. Ա. Վելյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. հուլիսի 8-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Գիտական գրականության մեջ կերպարաստեղծման խնդիրը քննվել է, ինչպես գրականագիտության, այնպես էլ լեզվաբանության տարբեր գիտակարգերի, հատկապես՝ ոճագիտության դիտանկյունից: Կերպարի ուսումնասիրությունը հետազոտողները կատարել են առավելապես բառապաշարի սոցիալական շերտի, խոսքում կիրառվող պատկերավորման միջոցների, բացահայտ հեղինակային կամ միջկերպարային մեկնաբանությունների քննության եղանակով: Այս մոտեցումները, սակայն, բավարար չեն լիրիկական դրամայի դեպքում, որտեղ դրամատիկ երկխոսության և չափածո գրվածքի շնորհիվ կերպարներն օժտվում են յուրահատուկ խոսքային վարքով:

Պ. Բ. Շելլիի «Ազատագրված Պրոմեթեոս»-ում կերպարները, ի լրումն ստեղծագործության բնույթից բխող հատկանիշների, ստանում են խոսքի կառուցման հավելյալ առանձնահատկություններ՝ պայմանավորված հեղինակային միտումներով և տեքստի գործաբանական նպատակով, այն է՝ ներազդել ընթերցողի ճանաչողական գործընթացի վրա և դրանով ծառայել հեղափոխական և բարոյական մտքի զարգացմանը:

Սույն ատենախոսության **օբյեկտը** կերպարաստեղծման լեզվական միջոցներն են գեղարվեստական գրականության և դրա թարգմանության մեջ:

Աշխատանքի ուսումնասիրության **առարկան** լիրիկական դրամայում կերպարաստեղծման լեզվաոճական միջոցների առանձնահատկություններն են և թարգմանվածքում կերպարների համարժեք վերաստեղծման խնդիրը:

Աշխատանքի **նպատակն** է քննել կերպարաստեղծման համար որդեգրված լեզվական իրացման ռազմավարությունները «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում և դրա թարգմանվածքում և համապատասխան մոդելների, գործիքների կիրառմամբ գնահատել թարգմանության մեջ վերաստեղծված կերպարների համարժեքությունը:

Ուսումնասիրության նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ **խնդիրների** լուծումը՝

- հետազոտել դրամայի և լիրիկայի առանձնահատկությունները՝ Շելլիի լիրիկական դրամայի նկարագիրը կազմելու համար,
- ուսումնասիրել Շելլիի լեզվաոճը և տեքստի կառուցման գործաբանական նպատակները,
- վեր հանել բնագրում և թարգմանվածքում իմաստային դաշտերի դերը կերպարաստեղծման տեսանկյունից,
- գնահատել թարգմանական համարժեքությունը իմաստային դաշտերի զուգադրական քննությամբ,
- վեր հանել բնագրում և թարգմանվածքում խորհրդանիշների դերը կերպարաստեղծման հարցում և խորհրդանշական տեքստի

կառուցվածքային մոդելի հիման վրա գնահատել թարգմանական համարժեքությունը,

- վեր հանել բնագրում և թարգմանվածքում արտահայտչական շարահյուսական միջոցների կերպարաստեղծ գործառնությունը, այդ դիտանկյունից գնահատել թարգմանական համարժեքությունը:

- գնահատել կերպարների՝ թարգմանվածք փոխադրման համարժեքությունը:

Վերը նշված նպատակով և խնդիրներով են պայմանավորված հետազոտության **մեթոդները**: Դրամայի տեքստի հիման վրա կատարել ենք իմաստաբանական, շարահյուսական, ոճական, նշանագիտական վերլուծություն: Առկա են նաև գրականագիտական վերլուծության տարրեր: Համատեքստային ու գործաբանական վերլուծության մեթոդները կիրառվել են կերպարների, հեղինակային միտումների լեզվականացումը բացահայտելու համար, իսկ զուգադրության և համեմատության միջոցով գնահատվել է թարգմանության համարժեքությունը:

Իմաստային դաշտերի, արտահայտչական շարահյուսության, խորհրդանշության և թարգմանական համարժեքության տեսությունները կազմում են հետազոտության **մեթոդաբանական հենքը**:

Աշխատանքի **նորույթն** այն է, որ առաջին անգամ ուսումնասիրվում են կերպարների խոսքի և դրա հայերեն թարգմանության իմաստային ու կառուցվածքային առանձնահատկությունները լիրիկական դրամայում իմաստային դաշտերի, խորհրդանշանների, շարահյուսական կառույցների և այս ամենում ներկառուցված իմաստային էնթրոպիայի քննարկման համալիր մոտեցմամբ: Ուսումնասիրության շրջանակներում առաջին անգամ իմաստային դաշտերը դիտարկվել են որպես տեքստում կերպարների վերաստեղծման, ինչպես նաև բնագիր տեքստի և թարգմանվածքի համարժեքության գնահատման գործիք: Առաջին անգամ է նաև, որ խորհրդանշական տեքստը դիտարկվում է որպես եռաչափ կառուցվածք ունեցող համակազմ, որի «չափումների» ուսումնասիրությունը կստեղծի անհրաժեշտ հենք թարգմանական համարժեքության գնահատման համար:

Ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է կերպարաստեղծման և թարգմանվածքում կերպարների վերաստեղծման խնդիրը իմաստաբանության, կառուցվածքային և ճանաչողական լեզվաբանության, խորհրդանշության և թարգմանաբանության տեսանկյունից ուսումնասիրելու անհրաժեշտությամբ: Արդիականությունը պայմանավորված է նաև թարգմանաբանության խնդիրների լուծման մեթոդա պահանջով:

Աշխատանքի **տեսական նշանակությունն** այն է, որ հետազոտության մեջ կիրառված նոր մոտեցումները նպաստում են իմաստաբանության,

նշանագիտության, ճանաչողական և կառուցվածքային լեզվաբանության, ինչպես նաև թարգմանական համարժեքությանը նվիրված տեսությունների զարգացմանը: Ատենախոսության մեջ իր ծավալով առանձնանում է իմաստային դաշտերի քննարկումը, որը համեստ ներդրում է իմաստային դաշտերի տեսության մեջ նոր ուղղությունների զարգացման համար:

Ատենախոսության **գործնական նշանակությունն** այն է, որ պոեզիայի թարգմանության ռազմավարությունների ուսումնասիրության արդյունքում ստեղծված աստիճանակարգային կադապարը, հետազոտվող տեքստի համեմատական վերլուծության մեթոդները, թարգմանական համարժեքության գնահատման համար գործածվող գործիքակազմը և խորհրդանշական տեքստի մեկնությանը նոր մոտեցումը կիրառելի են թարգմանաբանության, տիպաբանության և տեքստի վերլուծության դասավանդման բնագավառում, ինչպես նաև լիրիկական դրամաներ, խորհրդանշական տեքստեր թարգմանելիս:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են ուսումնասիրության թեման, արդիականությունը, առարկան, փաստական նյութը, նպատակը և խնդիրները, մեթոդները և մեթոդաբանական հենքը, գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքները:

Ատենախոսության **առաջին գլուխը (Լիրիկական դրաման թարգմանաբանական քննության համատեքստում)**, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**Լիրիկական դրաման որպես գրական երկու սեռերի համաձուլվածք**) քննարկվում են երկու գրական սեռերի՝ դրամայի և լիրիկայի կառուցվածքային, իմաստային և ոճական առանձնահատկությունները: Երկու գրական սեռերի հատումը մեկ ստեղծագործության մեջ ներկայացվում է որպես գրական երկու սեռերի յուրօրինակ միասնություն, որն այսօր ընդունված է անվանել լիրիկական դրամա: Այն չունի հստակ սահմանված չափանիշներ, և նրանում դրամայի և լիրիկայի հատկանիշների համամասնությունը և վերջինից բխող լեզվաոճական առանձնահատկությունները որոշելու համար հարկ է ուսումնասիրել կոնկրետ ստեղծագործությունը:

Երկրորդ ենթագլխում (**Պոեզիայի թարգմանության ժամանակակից ռազմավարությունների համակարգը**) ուսումնասիրությունը կենտրոնանում է պոետիկ տեքստի թարգմանության ռազմավարությունների վրա: Տեսաբանները (Ջ. Քեթֆորդ, Ջ. Դրայդեն, Ջ. Հոլմս, Ա. Լեֆներ, Ջ. Վու, Ջ. Դերիդա և այլք) պոեզիայի թարգմանությանն անդրադարձել են տարբեր հայեցակետերից: Պոեզիայի թարգմանության խնդրին տարբեր մոտեցումները թարգմանչին

տալիս են ոչ միայն անհրաժեշտ հնարների բազմազանություն, այլև հիմք թարգմանության վերլուծության համար: Պոեզիայի թարգմանության համար կիրառելի ռազմավարությունները ներկայացրել ենք ըստ բնագրին հավատարմության՝ նվազման կարգով՝

1. բառացի թարգմ. – հնչյունական թարգմ. – տաղաչափական թարգմ. – տառադարձություն,
2. կրկնօրինակում – բնագրին մոտ թարգմ. – հանգային (համահնչյունական) թարգմ.,
3. համանմանություն,
4. հարմարեցում – անհանգ ոտանավոր – օրգանականություն – մշակութային փոխարինում – բացատրություն – հարանշանակային թարգմ. – պոեզիայից դեպի արձակ,
5. մեկնաբանություն – ստեղծագործականություն – նմանակում:

Երրորդ ենթազվիսում (**Պ. Բ. Շելլիի լիրիկական դրամայի լեզվաոճական առանձնահատկությունները**) անդրադարձ է կատարվում Պ. Բ. Շելլիի լիրիկայի լեզվաոճական առանձնահատկություններին: Դիտարկվում են Շելլիի ոճի վերաբերյալ գոյություն ունեցող ուսումնասիրությունները, ինչպես նաև Շելլիի մենագրություններն ու ակնարկները: Մասնավորապես, առանձնանում է Մ. Ռուսի կատարած ուսումնասիրությունը: Վերջինս Շելլիի ոճը համեմատում է իմաստային էնթոուպիայի և ճանաչողության կապի հետ՝ մեջ բերելով Զ. Ռայթի խոսքը, ըստ որի իմաստային էնթոուպիան հիմնված է այն սկզբունքի վրա, որ ճանաչողությամբ կանոնակարգված բաղադրիչները միտված են ժամանակի ընթացքում կազմալուծվելու և դառնալու անկանոն՝: Էնթոուպիկ, բարդ կառուցվածքով տեքստի ընկալման համար ընթերցողից պահանջվում է ավելի մեծ մտավոր ճիգ լեզվական ապակողավորում իրականացնելու համար, որի արդյունքում կատարվող եզրահանգումները լինում են ինքնուրույն և հիմնավորված:

Սույն ատենախոսության մեջ իմաստային էնթոուպիան² դիտարկվում է որպես «Ազատագրված Պրոմեթեոս» դրամայում ներկառուցված համակարգ, որով հեղինակը հասնում է ցանկալի ազդեցության ընթերցողի մտքի և հոգեբանության վրա, իսկ լեզվական էնթոուպիայի պահպանումը՝ որպես Շելլիի

¹ Ross M. B., Shelley's wayward dream-poem: the apprehending reader in "Prometheus Unbound", Keats-Shelley Journal, Vol. 36, New York: Keats-Shelley Association of America, Inc., 1987, pp. 111-112.

² Ձևավորվում է լեզվական էնթոուպիայի արդյունքում: Սույն աշխատանքում, լեզվական էնթոուպիա ասելով, նկատի ունենք լեզվի՝ իմաստային և կառուցվածքային ապականոնակարգվածության հանգեցնող ներուժը:

ստեղծագործության թարգմանությունների գնահատման համար կարևոր չափանիշ: Մեր և մի շարք տեսաբանների (Մ. Ռոս. Ջ. Փիրս, Ֆ. Բերվիք, Ե. Կլիմենկո) ուսումնասիրության համադրությամբ առանձնացրել ենք լեզվական էնթոպիա ստեղծելու հետևյալ միջոցները՝ ժխտական կառույցներ, բառային կուտակումներ, փոխաբերական շարքեր, բարդ պատճառական կապեր, բարդ շարահյուսական կառույցներ, բառաբարդում, վերացական կերպարներ:

Ատենախոսության **երկրորդ գլուխը (Իմաստային դաշտերը որպես կերպարաստեղծ շրջանակ և թարգմանական համարժեքության գնահատման միջոց)** բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**Իմաստային դաշտերի դերը տեքստի ուսումնասիրության շրջանակներում**) իմաստային դաշտերը դիտարկվում են որպես կերպարաստեղծման և թարգմանական համարժեքության գնահատման միջոց: Հայտնի է, որ բառը շարակարգում իրացնում է իմաստային կառուցվածքի իմույթներից մեկը կամ ստանում է տեքստային վերլուծության ընթացքում բացահայտվող նոր հարանշանակային իմաստ: Մեր տեսակետն այն է, որ միևնույն սկզբունքով հնարավոր է ուսումնասիրել ամբողջ իմաստային դաշտը՝ ընդունելով այն որպես բառային միավորների մեկ ամբողջություն: Իմաստային դաշտերի տեսության մեջ ընդունված այս մոտեցումը հնարավորություն կտա դուրս բերել ամբողջական, ընդգրկուն գիտելիք կերպարի խոսքում հիմնական իմաստային շեշտադրումների մասին:

Ուսումնասիրության նպատակով պայմանավորված փոխառել ենք մի շարք լեզվաբանների (Է. Սագի, Կ. Մեյթոն, Ջ. Գուդարզի) առաջարկած «իմաստային դաշտի խտություն» եզրը: Գուդարզին գեղարվեստական տեքստի և իմաստային դաշտերի ուսումնասիրության համար առաջարկում է իմաստային դաշտի խտությունը հաշվելու բանաձև, ըստ որի, հարկ է յուրաքանչյուր իմաստային դաշտին պատկանող բառային միավորների քանակը բաժանել տեքստում ողջ բառապաշարի քանակին և ստացվածը բազմապատկել հարյուրով³: Այդ պարզ բանաձևը թույլ է տալիս տոկոսային հարաբերակցությամբ ցույց տալ իմաստային դաշտի խտությունը, ինչը հնարավորություն կտա ուսումնասիրվող հատվածներում հատկորոշել յուրաքանչյուր կերպարի խոսքին բնորոշ հիմնական իմաստային դաշտերը, հաշվարկել դաշտերի խտությունը և վեր հանել կերպարի խոսքում հիմնական իմաստային-գաղափարական շեշտադրումները:

Երկրորդ ենթագլխում (**«Տառապանք» իմաստային դաշտը որպես Պրոմեթեոս կերպարի վերաստեղծման շրջանակ**) վերլուծության է

³ Goodarzi Z., Lexical patterning in poetic text: analyzing literary style. 2009, Web. 2 October 2018 <<http://www.pala.ac.uk/uploads/2/5/1/0/25105678/goodarzi2009.pdf>>.

ենթարկվում «տառապանք» իմաստային դաշտը Պրոմեթեոս կերպարի խոսքում: Կերպարի խոսքի բնագրում այս դաշտի միջուկը և կենտրոնը ներկայացված են 3,7% խտությամբ, ինչը նշանակում է, որ դաշտը կարևոր դեր ունի կերպարի խոսքի ձևավորման և, հետևաբար, նաև կերպարի պատկերման հարցում: Թարգմանվածքում խտությունը կազմում է 4,4%: «Տառապանք» իմաստային դաշտի շնորհիվ պատկերվում են Պրոմեթեոս կերպարի հոգեկան և ֆիզիկական տառապանքը, տառապանքի պատճառները, առկայացվում է տառապանքի հարատևության գաղափարը: Այս իմաստային դաշտի միավորները խոսքում, իմաստային հակադրության մեջ դրվելով հականիշ բառերի հետ, իրացնում են տառապանքը վեհացնելու և այն անպատժելի բռնակալությունից գերադասելու հեղինակային մտադրությունը՝

«Prometheus
torture and solitude,
Scorn and despair, - these are mine
empire: -
More glorious far than that which thou
surveyest
From thine unenvied throne, O, Mighty
God!» (Shelley 1959: 72)

«Պրոմեթեոս
Տվայտանքի, անարգանքի,
առանձնության
Ու վիատման – ահա ամբողջ
կայսրությունն իմ:
Ավելի վեհ, քան այն, որին հսկում ես
դու,
Անխանդելի քո այդ գահից, հզոր
աստված:» (Շելլի 1968: 11-12)

Այս օրինակում աչքի է ընկնում է «glorious» ածականի կիրառությունը «հոգեկան տառապանք» ընդհանուր իմակի շուրջ միավորված բառերի հետ, որը ստեղծում է բռնակալության և պայքարի հակադրությունը (*glorious despair, scorn, solitude, torture*): «Glorious» («սքանչելի», «փառահեղ») բառի համադրումը «despair, scorn, solitude, torture» («հուսահատություն», «ծաղր», «միայնություն», «տանջանք») բառային միավորների հետ ստեղծում է նրբաբանություն, որի շնորհիվ արդեն դրսևորվում են Պրոմեթեոսի հոգեկան ապրումները: Թարգմանության մեջ հիշյալ պատկերն առկայացվել է իմաստային դաշտի *սուր ցավեր, տվայտանք, առանձնություն, վիատում* բառային միավորների միջոցով, այնուամենայնիվ, առկա չէ «torture» բառը, ինչը համարում ենք թարգմանական կորուստ, քանի որ դրա իմաստային կառուցվածքում «տառապանք» հիմնանշանակային իմաստի շնորհիվ բառը կենտրոնական է իմաստային դաշտի ձևավորման համար:

«Տառապանք» իմաստային դաշտի միավորները Պրոմեթեոս կերպարի խոսքում ձեռք են բերում նաև «տառապանքի դրսևորում», «տառապանքի պատճառ», «ֆիզիկական և հոգեկան տառապանք», «տառապանքի հարատևություն» իմակները՝ ձևավորելով խոսքում իմաստային դաշտի կառուցվածքը, որը թարգմանվածքում հիմնականում պահպանվել է:

Երրորդ ենթագլխում (**Իմաստային դաշտերի բառայնացման խնդիրը Յուպիտեր կերպարի խոսքում**) վերլուծության է ենթարկվում «ուժ» իմաստային դաշտը Յուպիտեր կերպարի խոսքում: Դաշտն առանձնանում է կերպարային ուժերի աստիճանակարգության ձևավորմամբ և դրա ընդգծմամբ՝

«Jupiter

Ye congregated powers of heaven, who
share

The glory and the strength of him ye
serve,

Rejoice! henceforth I am omnipotent.»
(Shelley 1959: 121-122)

«Յուպիտեր

Ուրախացե՛ք, ո՛վ երկնային
զորություններ,

Ու բաժանե՛ք ուժն ու փառքը ձեր
արքայի,

Որին հյու ծառայում եք. անպա՛րտ եմ
ես:» (Շելլի 1968: 91)

Սույն օրինակը հատված է Յուպիտերի առաջնախոսքից՝ ուղղված երկնային աստվածություններին: Հատվածում «ուժ» իմաստային դաշտի անփոփոխակ իմույթն առկայացվել է «powers» և «strength» բառային միավորների միջոցով, որոնց իմաստային կառուցվածքում այդ իմույթը հիմնանշանակային է: Ուստի նշյալ միավորները կազմում են դաշտի միջուկը, որն իր յուրօրինակ իմաստային կապերով առանձնանում է հատվածում: «Powers» միավորը, կապակցվելով «heaven բառի հետ, զարգացնում է երկնային ուժերի հզորության պատկերը: Միևնույն «power» բառը «ծառայել» (serve) իմույթի միջոցով շաղկապվում է «strength» բառի հետ՝ զարգացնելով ուժերի աստիճանակարգություն, որում երկնային ուժերը ստորադասվում են ամենազոր (omnipotent) ուժին: Իմաստային դաշտը ձևավորում է երկու մակարդակ՝ գերագույն ուժ և այդ ուժին ծառայող կամ պատկանող մնացյալ ուժերը: Միևնույն հատվածի թարգմանվածքում դաշտի իմաստային առանցքը համարվող «power» և «strength» միավորները և դրանց կապակցվածությունը պահպանվել են, սակայն կատարվել են նաև թարգմանական հավելումներ «հյու» և «արքա» բառերի միջոցով, որի արդյունքում ավելի է ընդգծվել միավորների ստորակարգությունը «ուժ» դաշտում՝

strength (him – Jupiter)

↑
serve

powers of heaven

ուժ (ձեր արքայի – Յուպիտեր)

↑
հյու ծառայել

երկնային զորություններ

«Ուժ» իմաստային դաշտն առանցքային է «Ազատագրված Պրոմեթեոս» դրամայում կերպաների աստիճանակարգային հարաբերակցության պատկերման համար: Ուժերի նշյալ աստիճանակարգությունը թարգմանվածքում պահպանվել է, երբեմն իմաստային թարգմանության միջոցով:

Չորրորդ ենթագլխում («Բնություն» իմաստային դաշտի կերպարաստեղծ դերը Պրոմեթեոս և Յուպիտեր կերպարների խոսքում) դիտարկվում են «բնություն» իմաստային դաշտի գործառույթները Պրոմեթեոս և Յուպիտեր կերպարների խոսքում և դրանց հայերեն թարգմանվածքում, ինչպես նաև համեմատվում են երկու կերպարների խոսքում գերիշխող իմաստային դաշտերի խտությունները: Բնագրում «բնություն» իմաստային դաշտը, կապակցվելով «տառապանք» և «ուժ» իմաստային դաշտերին, երկու կերպարների խոսքում ներկայանում է տարբեր իմաստային իրացումներով՝ նպաստելով կերպարների բնութագրի ձևավորմանը: Պրոմեթեոսի առաջնախոսքում դաշտը ներկայանում է 4.68% խտությամբ, Յուպիտերի դեպքում այն 4.28% է, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ պոեմում կերպարների գաղափարական, հասկացութային դաշտը պատկերվում է բնության երևույթների միջոցով:

Պրոմեթեոսի առաջնախոսքում, շնորհիվ «տառապանք» իմության առկայացնող բառային միավորների հետ իմաստային կապակցման, «բնություն» իմաստային դաշտի իմաստային անփոփոխակի նկատմամբ ստորակարգվում են երկու մակարդակներ՝ «անշունչ» - «անձնավորված» և «թշնամի» - «տարերք», օրինակ՝

«Almighty, had I deigned to share the shame

Of thine ill tyranny, and hung not here

Nailed to this wall of eagle-baffling mountain.» (Shelley 1959: 72)

Հատվածում «անշունչ» իմաստային խմբում ընդգրկված բառային միավորներն աչքի են ընկնում չեզոք կիրառմամբ՝ իրացնելով հիմնանշանակային իմաստը: Նշված խմբում բառային միավորները կիրառված են որպես հիմնական իրադարձությունների մասնավորեցման լեզվական միջոցներ: Օրինակում «*mountain*» գոյականը, կապակցվելով «տառապանք» իմաստային դաշտի *nail* բառային միավորի հետ, տեղայնացնում է տառապանք զգալու պատկերը: «*Mountain*» բառը ստացել է «*eagle-baffling*» որոշիչը, որն ընդգծում է Պրոմեթեոսի տառապանքի վայրի բնապատկերի ահագնությունը: Հետևաբար, Պրոմեթեոսի խոսքում բնապատկեր իմաստային խմբի միավորները հանդես են գալիս որպես տառապանքի ուժգնացման, ինչպես նաև տեղայնացման միջոցներ:

Յուպիտերի առաջնախոսքում «բնություն» իմաստային դաշտի բառային միավորներն իրացնում են «ուժգին», «սաստիկ» իմակները՝ «ուժ» իմաստային դաշտի միավորների հետ համակցությամբ: Լեզվական իրացում են ստացել կերպարի իշխանատենչությունը, փառամոլությունը, ինքնավստահությունը:

Կերպարների առաջնախոսքի թարգմանվածքում նույնպես գերիշխող են միևնույն իմաստային դաշտերը: Սակայն բնագրի հետ համեմատությունը ցույց է

տալիս, որ այդ իմաստային դաշտերը թարգմանվածքում առավել մեծ կարևորություն են ստացել, քանի որ ներկայացված են ավելի մեծ խտությամբ:

Իմաստային դաշտերի ուսումնասիրությունն այս և նախորդ ենթագլուխներում բացահայտում է հետևյալ օրինաչափությունները.


1. Դաշտերը տեքստում գործում են որպես մեկ ամբողջություն և հաճախ միմյանց հետ հատվում են, որի արդյունքում միևնույն բառային միավորը տեքստի նույն կամ տարբեր հատվածներում միաժամանակ կարող է պատկանել տարբեր իմաստային դաշտերի, սակայն դաշտերի սահմաններում չունենալ միևնույն տեղաբաշխումը՝ մի դեպքում վերագրվելով կենտրոնին, մեկ այլ դեպքում՝ եզրերին:

2. Իմաստային դաշտերը հատվում են եզր-կենտրոն, կենտրոն-եզր սկզբունքով, այսինքն՝ միևնույն բառային միավորը պատկանում է մի իմաստային դաշտի եզրին և մյուս իմաստային դաշտի կենտրոնին:


Երրորդ գլուխը (խորհրդանիշների և արտահայտչական շարահյուսական միջոցների կերպարաստեղծ գործառույթը «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում և հայերեն թարգմանվածքում), բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**խորհրդանիշները որպես տեքստում իմաստային առանցք և կերպարաստեղծման միջոց**) ուսումնասիրվում են խորհրդանիշների և խորհրդանշական տեքստի առանձնահատկությունները: Խորհրդանշության վերաբերյալ տարբեր տեսաբանների (օր.՝ Է. Զրբաշյան, Դ. Շաբերբեր, Վ. Յիթս, Ս. Ավերինցև, Ն. Ֆրայ) աշխատությունների ուսումնասիրությամբ առանձնացվել են խորհրդանիշների հետևյալ հիմնական առանձնահատկությունները՝ ձևական մոտիվացիա (խորհրդանշական իմաստը պայմանական է), համընդհանրություն, կրկնակի կողավորում (նշանի իմաստային հարացույցում առկա կամ հարացուցային իմաստ և խորհրդանշական իմաստ) փոխաբերական կամ փոխանվանական զուգորդումներ, արքեստիպային ծագում, համատեքստում բազմիմաստության պահպանում: Այս հատկանիշների շնորհիվ Շեկի խորհրդանշական տեքստը փոխանցում է լրացուցիչ տեղեկատվություն, որը լիրիկական դրամայում նպաստում է կերպարի խոսքում ներակա իմաստների ձևավորմանը, տալիս է կերպարի նկարագիրը, ինչպես նաև այլ կերպարների հետ կապը: Մյուս կողմից, խորհրդանշությունը Շեկի համար ծառայում է որպես գործիք նպատակային ապականոնակարգվածությունը, բարդությունը, խորությունը, դժվարընկալելի կերպարների խոսքում կառուցելու համար: Կարող ենք պնդել, որ խորհրդանիշի շնորհիվ գրվածքում էնթոպիան դրսևորվում է ոչ միայն շարակարգային, այլև հարացուցային հարաբերություններում: Այսպիսի տեքստը կարող ենք համեմատել եռաչափ տարածական պատկերի հետ: Եթե ընդունենք, որ եռաչափ տարածության x առանցքը կազմում է տեքստի շարակարգը, y

առանցքը՝ խորհրդանիշի հարացուցային իմաստը, իսկ z առանցքը՝ խորհրդանշական իմաստը, ապա խորհրդանշական տեքստի կառուցվածքը կունենա հետևյալ տեսքը՝




Այսպես, համատեքստով որոշվում է խորհրդանիշի հիմնանշանակային իմաստը, իսկ նախնական գիտելիքի կամ միջտեքստային որոնումների միջոցով՝ խորհրդանշական իմաստը: Բերենք հետևյալ օրինակը՝ «power» բառը Շելլիի պոեզիայում խորհրդանշում է Աստծուն կամ պատճառների պատճառը և տեքստում իրացրել է «զորություն» իմաստը, հետևաբար, կունենանք հետևյալ մոդելը՝



Մոդելը կիրառելի է խորհրդանշական տեքստի և դրա թարգմանվածքի թարգմանական համարժեքությունը գնահատելիս. բնագրի և թարգմանվածքի վերլուծությունից ստացված մոդելների համադրման միջոցով հնարավոր է պարզել և ցույց տալ վերջիններիս համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը: Մոդելը կիրառելի է ոչ թե ամբողջ տեքստի, այլ դրանում իրացվող յուրաքանչյուր խորհրդանիշի համար:

Երկրորդ ենթագլխում (**խորհրդանիշների կերպարաստեղծ գործառույթը «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում և հայերեն թարգմանվածքում**) Կ. Զիմանսկու առաջարկած խորհրդանշային համակարգի հիման վրա վերլուծության է ենթարկվում «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում կերպարների աստիճանակարգային հարաբերությունը, քանի որ պատճառ և հետևանք նշանակող խորհրդանիշների աստիճանակարգությունը կամ աստիճանակարգային բուրգը⁴, կազմում է «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայի կառուցման և դրանում կերպարների հարաբերության հիմքը:

Շարակարգում (կամ տեքստում) նշյալ խորհրդանիշների հարացուցային և խորհրդանշական իմաստների վերհանումը հնարավորություն կտա բացահայտել տեքստում կառուցված իմաստային վեկտորը և դրանում կերպարների հարաբերակցությունը: Այլ կերպ ասած՝ այսպես բացահայտվում է խորհրդանշական տեքստի եռաչափ կառուցվածքը: Թարգմանաբանության տեսանկյունից սա կարևոր չափում է թարգմանական համարժեքության գնահատման համար: «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում «պատճառ» և «հետևանք» են խորհրդանշում կերպարի կամ ուժի «տարածք» կամ «ազդեցություն» ցուցող նշանները: Օրինակ՝ «*Asia waits in that far Indian vale, now invested with fair flowers and herbs, and haunted by sweet airs and sounds*» նախադասության մեջ *vale* բառը բնագրում և թարգմանվածքում իրացրել է «հովիտ» հարացուցային ու «պատճառ» խորհրդանշական իմաստները, և համատեքստում (շարակարգում) զարգացրել է «դրական» իմակը: Օրինակը ներկայանում է հետևյալ գծապատկերով՝



x - *Asia waits in that far Indian vale, now invested with fair flowers and herbs, and haunted by sweet airs and sounds* (շարակարգ)

⁴ Ստորին ուժը/կերպարը խորհրդանշում է «հետևանք» ավելի վեր գտնվող ուժի/կերպարի նկատմամբ, և հակառակը՝ վերին ուժը/կերպարը խորհրդանշում է «պատճառ» ստորադաս ուժի/կերպարի նկատմամբ:

y - հովիտ (իմույթ), դրական (իմակ)

z – պատճառ (խորհրդանշական իմաստ)

Ընդհանուր առմամբ, թարգմանվածքում խորհրդանշական իմաստից շեղումները հիմնականում կապված են ուժերի տարածքի կամ չափի խախտման հետ, ինչը չի հանգեցնում պատճառ – հետևանք ցուցող խորհրդանշական իմաստից էական շեղման: Հետևաբար, թարգմանվածքում պատճառահետևանքային կապ ցույց տվող խորհրդանշական իմաստը որոշակի վերապահումներով վերաստեղծվել է:

Երրորդ ենթագլխում **(Կերպարաստեղծման շարահյուսական միջոցների գեղարվեստական ազդեցության կադապարումը պոեզիայում)** կերպարաստեղծման տեսանկյունից քննարկվում են շարահյուսական արտահայտչամիջոցների վերաբերյալ առկա ուսումնասիրությունները: Շարահյուսությունը լեզվում բառային աստղծը համակարգող ամբողջությունն է, որը բանաստեղծական տեքստի դեպքում առանձնանում է իր իսկ կանոններից շեղումը նորմի վերածելու միտումով: Հենց այս միտումն էլ ծառայում է որպես նշույթավորման և հեղինակային մտադրության ընդգծման եղանակ: Ենթագլխում առանձնացրել ենք կերպարաստեղծման օժանդակող հետևյալ արտահայտչական շարահյուսական միջոցները՝ սպասարկու բառ և լրացյալ կապի կրկնություն, շրջադասություն հանուն տրամաբանական շեշտի, հակադրույթ, նախադասության հաղորդակցական տեսակի կրկնություն, անշաղկապություն, պարզեցացիա, ներդրյալ կառույցներ, բառային կրկնություն:

Չորրորդ ենթագլխում **(Արտահայտչական շարահյուսական միջոցների կերպարաստեղծ գործառույթը «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում և հայերեն թարգմանվածքում)** դիտարկվում են շարահյուսական արտահայտչամիջոցները որպես «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում կերպարաստեղծման միջոցներ: Բնագրում և թարգմանվածքում դրանց ուսումնասիրությունը համարում ենք անհրաժեշտ նախապայման թարգմանական համարժեքության գնահատման համար:

Շեղի «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում կերպարների հատկալեզվի ձևավորմանը նպաստող շարահյուսական միջոցներն են շրջուն շարադասությունը, հակադրությունը, նախադասության հաղորդակցական տեսակների միտումնավոր կրկնությունը, անշաղկապությունը, բազմաշաղկապությունը, պարզեցացիան, բառային և շարահյուսական կառույցների կրկնությունը, որոնցից հատկապես պարզեցացիան ունի առանցքային դեր Պրոմեթեոս կերպարի վերակերտման հարցում:

Պարզեցացիայի կիրառությունն ուղղված է ոչ միայն պոեմին գեղարվեստականություն հաղորդելուն, այլև կերպարների վերապրումները և

զանազան երևույթների նկատմամբ վերաբերմունք արտահայտելուն: Մասնավորապես, Պրոմեթեոս կերպարի խոսքում պարցելացիայի միջոցով ընդգծված է՝ Պրոմեթեոսի ականաճանքը Երկրի հանդեպ, հակադրությունները Պրոմեթեոսի խոսքում, Պրոմեթեոսի՝ սեփական անձին ուշադրություն սևեռելու միտումը, Պրոմեթեոսի զգացմունքները՝ ուղղված Ասիային, Պրոմեթեոսի՝ միայնակ պայքարելու գաղափարը, գեղեցիկ աշխարհում Պրոմեթեոսի տառապանքի պատկերը, օրինակ՝ «*Ah me! alas, pain, pain, ever, for ever*» նախադասությունն առանձնանում է մի քանի արտահայտչական շարահյուսական միջոցներով՝ ներառյալ պարցելացիան և բառային կրկնությունը: Քննարկվող հատվածում պարցելացիայի շնորհիվ առանձնացվել է «*ah, me*» կապակցությունը, ինչը վկայում է կերպարի կողմից դեպի սեփական անձը ուշադրություն սևեռելու միտման մասին: Հատվածն առանձնանում է նաև շարահյուսական ընդլայնման՝ կրկնության, և շարահյուսական խտացման՝ անշաղկապության փոխհավասարակշռող համոզուազորմամբ:

Ասույթի հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում ազատ ստեղծագործմամբ: Կիրառված չէ պարցելացիան, որը ժամանակակից հայերենում սահմանափակ կիրառություն ունի: Բնագրում պարցելացիայի միջոցով առանձնացված «*yet I endure*» արտահայտությունը նախորդող ասույթից առանձնացվել է «բայց» հակադրական շաղկապով. ընդգծվել է իմաստային հակադրությունը, սակայն չի պահպանվել պարցելացիայի շնորհիվ «տոկալն» (*endure*) ընդգծելու հեղինակային միտումը: Պահպանված չէ նաև շարահյուսական կրկնությունը, սակայն «անվախճան» բառը խիստ արտահայտված հուզականության շնորհիվ փոխհատուցում է կրկնություն ոճական հնարի ազդեցությունը:

Աշխատանքի արդյունքներն ամփոփվում են հետևյալ եզրահանգումներով.

- Պ. Բ. Շելլիի «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայի առանցքային հատկանիշներն են իմաստային էնթրոպիան, խորհրդանշային համակարգը, դիցաբանական/խորհրդանշական կերպարները, հուզարտահայտչական խոսքը:

- Պրոմեթեոսի խոսքում «տառապանք» իմաստային դաշտը բազմաճյուղ համակարգ է, որի հիմնական բաժանումներն են՝ տառապանքի դրսևորում – տառապանքի պատճառ, ֆիզիկական տառապանք – հոգեկան տառապանք: Դաշտի հիմնական ճյուղավորումները թարգմանվածքում պահպանվել են, այնուամենայնիվ, դաշտի կազմը նույնական չէ. թարգմանվածքում դաշտն ունի նվազ խտություն: Միևնույն ժամանակ, դաշտի միջուկը թարգմանվածքում ավելի խիտ է, քան բնագրում: Սա նշանակում է, որ բնագրում տառապանքի պատկերն

ավելի մասնավորեցված է, քան թարգմանվածքում: Իսկ դաշտում ներկառուցված իմաստային էնթրոպիայի ձևավորման միջոցները թիրախ տեքստում հաճախ չեն պահպանվել, ինչը հանգեցրել է թարգմանվածքում իմաստային հստակեցման:

- Յուպիտեր կերպարի խոսքում առանցքային դեր ունի «ուժ» իմաստային դաշտը, որը ներկայանում է որպես երկու ճյուղերի կամ միավորների աստիճանակարգ՝ «իշխող ուժեր» և «ենթարկվող ուժեր»: Յուպիտեր կերպարի խոսքում առկա «ուժ» իմաստային դաշտի միջուկը թարգմանվածքում ավելի խիտ է, քան բնագրում: Սա նշանակում է, որ թիրախ տեքստում կատարվել է որոշակի իմաստային ընդհանրացում:

- Իմաստային դաշտերի ուսումնասիրությունը նաև ցույց տվեց, որ Պրոմեթեոս և Յուպիտեր կերպարների, ինչպես նաև մյուս կերպարների խոսքում գերիշխող է «բնություն» իմաստային դաշտը, որը կերպարների խոսքում ունենում է տարբեր իմաստային իրացումներ: Պրոմեթեոսի խոսքում այն հարակցվում է «ուժ» իմույթին՝ պատկերելով տառապանքի պատճառները, պայմանները և ուժգնությունը:

- «Ուժ» և «բնություն» իմաստային դաշտերի թարգմանական համարժեքության ուսումնասիրությունը վեր հանեց հակառակ արդյունքներ. եթե առաջին դեպքում թարգմանվածքը միտվել է իմաստային ընդհանրացման, ապա երկրորդ դեպքում՝ իմաստային կոնկրետացման, ուժգնացման:

- «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրաման առանձնանում է յուրօրինակ խորհրդանշային համակարգով: Գերիշխող են «պատճառ – հետևանք» արտահայտող խորհրդանիշները, որոնք տեքստում ներկառուցելով՝ Շելլին ստեղծում է կերպարների աստիճանակարգային բուրգը: Խորհրդանշական իմաստի մեկնությամբ Յուպիտեր կերպարն աստիճանակարգային բուրգի գագաթին է, իսկ Պրոմեթեոսը՝ ստորոտում: Սակայն տեքստում իրացված հարացուցային իմաստները ստեղծում են այդ բուրգի՝ որպես համակարգի փոփոխման պատկերը: Տեքստի իմաստային այս բարդ կառուցվածքը ձևավորում է իմաստային էնթրոպիկ կառուցվածք, ինչը, ի թիվս իմաստային էնթրոպիա ձևավորելու մյուս միջոցների, կատարում է ընթերցողի մտավոր գործունեության վրա ներազդելու գործառույթ:

- Թարգմանիչը, առաջնորդվելով ազատ ստեղծագործելու սկզբունքով, Շելլիի կառուցած խորհրդանշական տեքստի հատկանիշներն առավելապես պահպանել է, իսկ իմաստային շեղումները կամ կորուստները վերաբերում են և՛ հարացուցային, և՛ խորհրդանշական իմաստներին: Խորհրդանշական իմաստների պահպանումը կամ կորուստը կամայական չէ, այլ միտված է պահպանելու գեղարվեստականությունը:

- Կերպարաստեղծման հարցում ոչ պակաս կարևոր դեր ունեն արտահայտչական շարահյուսական միջոցները: «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայում դրանք նպաստում են իմաստային շեշտադրումներին, երբեմն նաև իմաստային հավելումներին: Նշյալ շարահյուսական միջոցները թարգմանվածքում առավելապես պահպանվել են, բացառությամբ պարզելացիայի, ինչը կապված է այն փաստի հետ, որ ի տարբերություն անգլերենի, հայերենին բնորոշ չէ տեքստի նման տրամահատումը: Չնայած Պրոմեթեոսի խոսքի թարգմանվածքում պարզելացիան 89%-ով կորսվել է, այդ շարահյուսական միջոցի կորուստը հիմնականում փոխհատուցվել է ամբողջովին կամ մասնակիորեն:

- Արտահայտչական շարահյուսական միջոցների կիրառմամբ ընդգծվել են կերպարների հույզերը և, մասնավորապես, Պրոմեթեոս կերպարի վրդովմունքը: Շարահյուսությամբ արտահայտվել են նաև գլխավոր կերպարի միայնակ պայքարը, դիմակայությունը, տոկունությունը, պատկերվել է բռնակալության և հեղափոխականության հակադրությունը: Նշյալ պատկերները թարգմանվածքում վերստեղծվել են, սակայն կրկին՝ որոշակի թերություններով:

- Լիրիկական դրամայում իմաստային դաշտերի, խորհրդանշային համակարգի և արտահայտչական շարահյուսական միջոցների քննությունը որպես կերպարաստեղծման միջոց արդյունավետ է կերպարի հատկանիշների դուրսբերման, կերպարների հարաբերակցության բացահայտման և թարգմանական համարժեքության գնահատման համար:

- Գեղարվեստական գրականության մեջ խորհրդանշները, շնորհիվ տեքստում և՛ հարացուցային, և՛ խորհրդանշական իմաստների պահպանման, տեքստն օժտում են իմաստային խորությամբ, որի ընկալման համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ուսումնասիրություն: Այս տեսանկյունից խորհրդանշները նպաստում են Շելլիի գրվածքում էնթոպիկ տեքստի ձևավորմանը:

- Տեքստի ուսումնասիրության և թարգմանական համարժեքության գնահատման համար առաջարկված մոտեցումները կիրառելի են ոչ միայն լիրիկական դրամայի, այլև գեղարվեստական այլ ժանրերի և բազմաբնույթ տեքստերի ու դրանց թարգմանության վերլուծության հարցում:

- «Ազատագրված Պրոմեթեոս» լիրիկական դրամայի հայերեն թարգմանվածքում կերպարների խոսքը կառուցված չէ իմաստային էնթոպիային ծառայելու համար: Այս դիտանկյունից համարժեք հատվածներն իմաստային էնթոպիան պահպանելու միտման արդյունք չեն: Խորհրդանշական իմաստներով առկայացվող կերպարների առնչակցությունը, որպես պատճառների և հետևանքների միասնություն, թարգմանվածքում

պահպանվել է մասամբ, իսկ բուն գեղարվեստականության և դրանում կերպարների պատկերման տեսանկյունից թարգմանությունը համարժեք է:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Պրոմեթեոսի տառապանքի բառայնացման միջոցների աստիճանակարգային կադապարումը (Պ. Բ. Շելլիի «Ազատագրված Պրոմեթեոս» պոեմի հիման վրա)», Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1 (42), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2017, էջ 338-347:
2. «Պոեզիայի թարգմանության ժամանակակից ռազմավարությունների համակարգը», Բանբեր Երևանի համալսարանի, բանասիրություն, 2 (26), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 3-12:
3. «Բառիմաստային դաշտերը որպես կերպարի վերստեղծման շրջանակ», Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1 (46), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2018, էջ 285-290:
4. «Շարահյուսական արտահայտչամիջոցների թարգմանության խնդիրները», Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1 (46), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2018, էջ 291-298:
5. «Շարահյուսական միջոցների կերպարաստեղծ ազդեցության կադապարումը պոեզիայում», Բանբեր Երևանի համալսարանի, բանասիրություն, 3 (27), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 73-80:
6. ««Բնություն» իմաստային դաշտի բառային միավորների կերպարաստեղծ գործառույթը Շելլիի «Ազատագրված Պրոմեթեոս» պոեմում», «Կանթեղ» գիտական հոդվածներ, 4 (77), «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2018, էջ 93-101:

HAYK HAMBARDZUMYAN

THE LINGUISTIC MEANS OF RECREATION OF MYTHOLOGICAL CHARACTERS
IN “PROMETHEUS UNBOUND” BY P. B. SHELLEY AND ITS ARMENIAN
TRANSLATION

SUMMARY

The problem of character depiction in literature has been addressed by literary studies, as well as various disciplines of linguistics. However, the existing methods of analysis are not sufficient for the study of a lyrical drama.

The **object** of the present dissertation paper is the linguistic means of character recreation in literature and its translation. The **subject matter** of the research are the linguo-stylistic peculiarities of character depiction in lyrical drama and its translation.

The **topicality** of the work is due to the need of observing the problem of character depiction and their recreation from the perspective of semantics, structural and cognitive linguistics, symbolism and translation studies and the present need of tackling the problems of translation studies.

The **aim** of the study is to scrutinize the means and strategies of character depiction in “Prometheus Unbound” by P. B. Shelley and its translation and, proposing new tools and models, assess the equivalence of character recreation in the Armenian translation.

To achieve the above-mentioned goal, the following tasks have been set:

- to examine the peculiarities of poetry and drama and describe Shelley’s lyrical drama,
- to probe into Shelley’s writing style and the pragmatics of his works,
- to identify the role of semantic fields in character depiction in both the source text and the target text,
- to assess the translation in terms of equivalence via a comparative analysis of semantic fields,
- to reveal the role of symbols in character depiction in the source text and the target text and, based on a structural model of symbolic texts, assess the Armenian translation in terms of equivalence,
- to reveal the role of poetic syntax in character depiction in both the source text and the target text and assess the Armenian translation as to equivalence,
- to assess the recreation of characters in the translation in terms of equivalence.

The **scientific novelty** of the research is determined by the fact that for the first time in a lyrical drama and its Armenian translation the semantic-structural peculiarities of characters' speech are examined through a complex approach integrating the study of semantic fields, symbols, syntactic structures and the semantic entropy built in the text. For the first time semantic fields are studied as a framework of character depiction in the text. For the first time a symbolic text is observed as a three-dimensional structure to form a basis for assessment of translation equivalence.

The **theoretical significance** of the present dissertation is due to the fact, that the new approaches and tools applied in the study may be a certain contribution to semantics, semiotics, cognitive linguistics and translation studies. The new approach to the study of semantic fields makes a modest contribution to the theory of semantic fields.

The **practical significance** of the present work is the use of the research outcomes in the courses of text analysis, translation studies and for the translation of lyrical dramas and symbolic texts.

The dissertation consists of Introduction, three Chapters, Conclusion, Bibliography and Appendix.

АЙК АМБАРЦУМЯН

ЛИНГВИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА ВОССОЗДАНИЯ МИФОЛОГИЧЕСКИХ ПЕРСОНАЖЕЙ В ДРАМЕ П. Б. ШЕЛЛИ "ОСВОБОЖДЁННЫЙ ПРОМЕТЕЙ" И В ЕЁ АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ

РЕЗЮМЕ

Проблема воссоздания мифологических персонажей в художественной литературе, одна из центральных в области литературоведческих исследований, с недавних пор стала предметом изучения разных лингвистических изысканий. Однако существующий методологический аппарат представляется недостаточно полным для изучения языка и стиля лирической драмы в современных условиях.

Объектом данного исследования являются лингвистические особенности воссоздания мифологических персонажей в художественной литературе и в соответствующих переводах. **Предметом** данного исследования являются лингвистические средства воссоздания персонажей в лирической драме и в переводе.

Актуальность работы обусловлена необходимостью рассмотрения проблемы создания персонажей и их воссоздания с точки зрения семантики, структурной и когнитивной лингвистики, символизма и современного переводоведения.

Целью исследования является изучение средств и стратегий воссоздания мифологических персонажей в "Освобождённом Прометее" П. Б. Шелли, а также разработка новых инструментов и моделей оценки эквивалентности их воссоздания в армянском переводе.

Для достижения вышеупомянутой цели были поставлены следующие **задачи**:

- изучить стилистический и прагматический потенциал произведений П. Б. Шелли, в частности лирической драмы "Освобождённый Прометей",
- определить роль семантических полей в создании персонажей как в исходном тексте, так и в тексте перевода,
- оценить перевод с точки зрения эквивалентности с помощью сравнительного анализа семантических полей,
- выявить роль символов в создании персонажей в исходном тексте и в тексте перевода,
- на основе структурной модели символических текстов, оценить армянский перевод с точки зрения эквивалентности,

- выявить роль экспрессивных синтаксических средств в создании образов как в исходном тексте, так и в тексте перевода и оценить армянский перевод с точки зрения эквивалентности,
- оценить воссоздание персонажей в переводе с точки зрения эквивалентности.

Новизна работы заключается в том, что в ней впервые предпринята попытка исследования семантических и структурных особенности речей персонажей в лирической драме П. Б. Шелли и ее армянском переводе посредством комплексного изучения семантических полей, символов, синтаксических структур и семантической энтропии в тексте. Впервые семантические поля изучаются как основа создания образов персонажей в тексте. Впервые символический текст рассматривается как трехмерная структура, определяются базовые критерии оценки эквивалентности перевода.

Теоретическая значимость данного исследования заключается в том, что его результаты, разработанные подходы и инструменты оценки эквивалентности перевода могут внести определенный вклад в развитие семантики, семиотики, когнитивной лингвистики и переводоведения, а также в теорию семантических полей.

Практическая ценность исследования состоит в том, что результаты работы могут быть использованы в курсах теории и анализа текста, переводоведения и при переводах лирических драм и символических текстов.

Данная работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

